

ՎԻՄԱԴՐԱԿԱՆ ՍՐԲԱԴՐՈՒՄՆԵՐ

Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Ա. Առաքելոց վանքի արձանագրության բովանդակ

Առաքելոց վանք-ամրոցը և համանուն ընդարձակ գյուղաքաղաքի մյուս հուշարձանները տեղավորված են Ռջևանի շրջանի Գետաշեն գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք, Կունեն կամ Կիրանց-ջուր գետակի գեղատեսիլ հովտում և անտառապատ լեռնալանջերին:

Հուշարձանախմբի կառուցվածքներից զդալի հետաքրքրություն է ներկայացնում հատկապես Առաքելոց վանքի գավիթը, որը իր «հազարաշեն» ծածկով հայկական ճարտարապետության եզակի կոթողներից է և առավել ակնհայտորեն է ցույց տալիս այն ընդհանրությունը, որ գոյություն ունի ժողովրդական զխատների և բարձր զարգացման հասած հայկական գավիթների կառուցողական ձևերի միջև:

Առաքելոց վանք-ամրոցի, մասնավորապես նրա նշանավոր գավթի շինության ժամանակը ստույգ որոշված չէ, քանի որ հայ մատենագրության մեջ այդ մասին տեղեկությունները պակասում են, իսկ հուշարձանների սակավաթիվ վիմական արձանագրություններն էլ մեծ մասամբ նվիրատվական են և անթվակիր:

Գիտական գրականության մեջ Առաքելոց հուշարձանախմբի ժամանակագրության համար սովորաբար իբրև ելակետ է ընդունվել գավթի հարավային մուտքի ընդարձակ արձանագրությունը. որի թվագիրը, սակայն, ժամանակին վերծանվել է էական սխալներով և հիմք դարձել հուշարձանների կառուցման ժամանակի մասին թյուր կարծիքների:

Այս նվիրատվական արձանագրությունը փորագրված է գավթի հարավային մուտքի բարավորի երկու քարերի վրա, կանոնավոր, զգալի շափով երկարացված, բոլորաձև երկաթագրով. բնագրի վերջին հինգ տառաշարքերը տեղավորված են բարավորի ներքևի սեղանաձև սրբատաշ հատվածի վրա. այստեղ տառաձևերը անաղարտ են մնացել և ընթերցվում են լիակատար հավաստիությամբ: Նույնը չի կարելի ասել բնագրի առաջին տառաշարքի մասին, որը փորագրված է եղել դրանդի կամարի տակ դրված կիսաշրջանաձև բեկորի վրա և մեծ մասամբ քայքայվել, շերտ-շերտ թափվել է: Այս շարքում տեղավորված է եղել արձանագրության տարեթիվը, որը եղծված լինելով, դժվարությամբ է վերծանվում և երկրայությունների տեղ է թողնում:

Բնագրի առաջին հրատարակիչ Ս. Զալալյանցը 1841 թ. թվագիրը անվերապահորեն կարդացել է թի թուին ՈՂԳ¹: Կես դար անց Մ. Բարխուդարյանցը նույն թվագիրը ինքնուրույն կերպով վերծանել է թի թվին ՈՂԴ²:

Հետագա ուսումնասիրողները, տարբեր առիթներով դառնալով սույն բնագրին, ընդունել են Զալալյանցի և Բարխուդարյանցի ՈՂԳ կամ ՈՂԴ ընթերցումը, այն համոզմամբ, թե նրանց արտագրության ժամանակ եղծված թվագիրը ավելի անվթար է եղել³: Վերջերս արձանագրությունը փորագրող Ստեփան գծողի ժամանակը որոշելու առնչությամբ թվագիրը հրատարակել է նաև հայ վիմագրության հմուտ վերծանող Ս. Բարխուդարյանը, որը նույնպես ընդունել է ՈՂԴ ընթերցումը, թեև հեղինակը այն առել է սեփական ժողովածուից⁴:

1 Ս. Զ ա լ ա լ յ ա ն ց, Ծանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիս, 1842, էջ 156:

2 Մ. Բ ա ռ խ ո լ դ ա ռ յ ա ն ց, Արցախ, Բաքու, 1895, էջ 378:

3 Տե՛ս Գ. Ս ա ռ գ ս յ ա ն, Առաքելոց վանք-ամրոցը և գյուղատեղը, «Էջմիածին», 1955, № 7, էջ 38:

4 Տե՛ս Ս. Բ ա ռ խ ո լ դ ա ռ յ ա ն, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 201:

Մեզ համար անհասկանալի է մնում, թե ինչպես է ծագել թվագրի ՈՂԳ ընթերցումը, որովհետև տեղում և լուսանկարի վրա ուշադիր զննելով արձանագրության առաջին շարքի խաթարված տառաձևերը, այնտեղ չենք գտնում ՈՂԳ կամ ՈՂԴ գրերից և ոչ մեկը։ Մեր ընդօրինակմամբ առաջին տողն ունի հետևյալ տառաշարքը՝ Ի ԹՎԱԿԱՆԻ[Ն] ՀԱ... իսկ 2—3 տառատեղ ընդհատումից հետո պարզ երևում է Զ գրի բացվածքի աղեղը, որի ներքևի մասը և թեք գծիկը հաղիվ են նշմարվում, քանի որ քարի վերի շերտը թափվել է՝ թողնելով այդ մասերի բարակ ուրվագիծը միայն։

Զնայած դրան, պահպանված ուրվագծերը անվիճելիորեն հաստատում են, որ թվագրի առաջին գիրը պետք է կարդալ Զ, Երկրորդ գիրը՝ տասնավորը, թեև ավելի պակաս է հողմահարված, բայց նույնպես պարզ չի երևում և մեր կարծիքով ավելի նման է Խ դրին։ Նույն վիճակում է նաև միավոր ցույց տվող տառաձևը, որը վերապահությամբ կարելի է կարգալ Բ։ Այսպիսով, եղծված տառաձևերի մասնակի վերականգնումներից հետո բնագրի վիճելի առաջին շարքը կարելի է վերծանել՝ Ի ԹՎԱԿԱՆԻ[Ն] ՀԱ[ՅՈՅ] Զ[ԽԲ] (1293 թ.), որը ոչնչով չի հիշեցնում նախկին՝ «Ի թուին ՈՂԳ» ընթերցումը։

Թվագրի մեր վերծանության հավաստիությունը հաստատվում է նաև արձանագրության մեջ հիշատակվող պատմական անձների ժամանակագրությամբ, հանգամանք, որ անտեսվել է բնագիրը ուսումնասիրողների կողմից։ Այդ անձներից նվիրատու հաշենիսենց թոռ Գրիգորը և բնագրի վերջում ստորագրող Ստեփան գծողը այլ աղբյուրներից հայտնի չեն, ուստի և չեն կարող ժամանակագրական կովան հանդիսանալ թվագրի ընթերցման ճշգրտությունը ստուգելու համար։ Այդպիսի կովան կարող է ծառայել միայն աթարեկ ամիրսպասալար Խուսիւրուղայի հիշատակությունը արձանագրության նախաբանում, որը մեջ է բերված հաշենիսենց Գրիգորի բարեգործության ժամանակը մատնանշելու նպատակով։ ԿԱՄԱԻ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԱՅ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Ի ԱԹԱԲԱԿ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԽՈՒԹԼՈՒԲՈՒՂԻՆ, ԵՍ՝ ԳԲԻԳՈՐ ԹՈՒՆ ԽԱԶԷՆԻՍԵՆՑ... և այլն⁵։

Խուսիւրուղան Կայենո և Մահկանաբերդի Արծրունիների իշխանական տոհմի աչքի ընկնող շառավիղներից է, աթարեկ ամիրսպասալար «հայոց և վրաց» Սագուն Բ-ի որդին։ Ինչպես հայտնի է, պարոն Սագունը Մահկանաբերդի իշխանաց իշխանն էր, Հաղբատավանքի և այս գավառի մի շարք հոգևոր ու մշակութային կենտրոնների (Դեղձուտի, Առաքելոց, Կիրանց վանքերը) պատրոնն ու հովանավորը։ Այս իրողությունը բաղմիցս վկայված է ոչ միայն պատմագրական աղբյուրներում (Կիրակոս Գանձակեցի, Վարդան Վարդապետ, Գրիգոր Ականցի, Սամուել Անեցի, Ստ. Օրբելյան և այլն), այլև բաղմաթիվ վիմական արձանագրություններում՝ սկսած 1250-ական թթ. մինչև 1280-ական թթ.։

Սագունի մահվան թվականը, ուրեմն և Խուսիւրուղայի ամիրսպասալարության տարին, ստույգ հայտնի չէ. ըստ վրաց պատմության նրա մահվան թվականն է 1281 թ.⁶, ըստ Ստ. Օրբելյանի ժամանակագրության՝ 1282 թ.⁷, իսկ ըստ Սամուել Անեցու Պատմության շարունակության՝ «ե։ Սագոն մեռաւ ի Տաշիր ի թւ ՌՄՁԵ» (1285 թ.)⁸։ Հոր մահվանից անմիջապես հետո Խուսիւրուղան վրաց Դեմետրե թագավորից ստանում է «վրաց և հայոց ամիրսպասալարի» տիտղոսը, իսկ մի քանի տարի անց՝ նաև աթարեկության պաշտոնը, որով և նա վրաց արքունիքում հասնում է իր հոր առաջնակարգ գիրքին⁹։

Այստեղից ակնհայտ է դառնում, որ քննարկվող արձանագրության թվագրի ՈՂԳ (1244 թ.) ընթերցումը միանգամայն անհարկի է նրանում հիշված ամիրսպասալար և աթարեկ Խուսիւրուղայի գործունեության ժամանակներին՝ 1281—85 թթ. մինչև դարավերջը, ՈՂԳ (1244) թ. պատմական ասպարեզ չէր իջել ոչ միայն Խուսիւրուղան, այլև նրա հայրը՝ աթարեկ Սագունը, որի իշխանության՝ մեզ հայտնի հնագույն վկայությունը վերաբերում է 1251 թ. (Խնձորուտ հնավայրում կանգնած «Բեմ» խաչքարի շհրատարակված արձանագրությունը)։ Բնական է կարծել, որ այդ ժամանակ Խուսիւրուղան նույնիսկ դեռ ծնված չէր, քանի որ «Բեմ» խաչարձանի նշված արձանագրության մեջ հիշատակվում է «իշխանաց իշխան, պարոն» Սագունի միայն մեկ՝ Պապաց որդին։

Խուսիւրուղայի որմանկարը իր հոր եղծված նկարի կողքին պահպանվել է Հաղբատավանքի ս. Նշան եկեղեցու հարավային պատին, ներքուստ, «Պարոն Խուսիւրուղայ» մակագրությամբ։

5 Գ. Ս ա Ր զ ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 37։

6 Н. А. Бердзенишвили и др., История Грузии, Тбилиси, 1962, էջ 246։

7 Ս տ. Օ Ր Ր Ե լ յ ա ն, Ժամանակագրութիւն, Երևան, 1942, էջ 28։

8 Սամուելի քահ. Անեցույ Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 163։

9 «История Грузии», էջ 247։

Նա աչքի ընկնող դեր է կատարել վրաց պատմության մեջ մոնղոլական տիրապետության շրջանում և պատահական չէ, որ նրա ռազմավարական սխրանքների մասին հիացմունքով են պատմում վրաց ժամանակագիրները: Նրա հիշատակը հավերժացված է Երուսաղեմի վրացական հաշ վանքի հուշացուցակում, հուլիսի 1-ի օրվա տակ, այս բառերով. «Այդ օրը պատարագ և հավիտենական մաղթանք կատարել հույությունդային, Սաղունի որդուն: Աստված ողորմի նրան»¹⁰:

Հայկական աղբյուրներում ամիրսպասալար հույությունդայի իշխանության հիշատակությանը առաջին անգամ հանդիպում ենք իր իսկ ընդարձակ արձանագրության մեջ՝ փորագրված Ավանի տաճարի արևմտյան պատին. «Ի թվիս 212 (1287) յաշխարհակալութեան արքայից արքային Արղունին: Սա աթաբեկ և ամիրսպասալար հույությունդայ, որդի աթաբեկ և ամիրսպասալար Սաղունին, թողի զԱւանայ զայգեց շարետն և զջուհկերոյն հորակտան...»¹¹:

Հույությունդայի երկրորդ հիշատակությունը Առաքելոց գավթի՝ քննարկվող արձանագրության մեջ է, որի թվականը, ինչպես տեսանք, ստույգ վերծանված չէ: Արդ, մինչև 6-րդ է գործել աթաբեկ ամիրսպասալար հույությունդան: Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում» և Մատի վերոհիշյալ հոդվածում այս հարցը բաց է մնացել: Աճառյանը Հաղրատավանքի որմանկարում պատկերված պարոն հույությունդային և Առաքելոց վանքի մեր արձանագրության աթաբեկ ամիրսպասալար հույությունդային տարբեր անձնավորություններ է համարում, հիմք ընդունելով Մ. Բարխուդարյանցի «Արցախը», որտեղ այդ անձնանունը ավանդված է «հույու Փուղին (հույի ու Բուղին)» աղավաղված ընթերցմամբ, իսկ արձանագրության թվագիրը՝ անիրական ՈՂԳ-ով¹²: Մինչդեռ, ինչպես ակնհայտ է դառնում վերը շարադրվածից, դրանք միևնույն անձն են՝ պարոն Սաղուն Արծրունու որդին՝ ամիրսպասալար հույությունդան:

Ակադ. Աշ. Հովհաննիսյանը հույությունդայի կառավարումը մեզ անհայտ աղբյուրների հիմամբ դնում է 1293 թ.¹³: Մի բան անվիճելի է, որ հույությունդայի սպանությունը պետք է կատարված լինի մինչև 1294—95 թթ., քանի որ հաշատուր Կեչառեցու այդ թվականներին գրված «Ողբ վասն աւերման տանս Արևելեան» բանաստեղծության մեջ հույությունդան հիշվում է մեռած իշխանների թվում. «...Հույությունդեն յարեան հալավի, զիւր անըման պատկերն ի հողի...» այսպես է ողբում նրա վախճանը բանաստեղծը¹⁴:

Այսպիսով, ամիրսպասալար արաբեկ խուրվուրդայի գործունեությունը հաւաստել է ավելի քան մեկ տասնամյակ, հոր մահվանից՝ 1281—83 թ. մինչև իր մահը՝ 1293—94 թթ.: Ահա այս տասնամյակի ընթացքում էլ Ստեփան գծողը փորագրել է հաշենիսենց քոռ Գրիգորի նվիրատվական առձանագրությունը՝ Առաքելոց վանքի գավթի հաւավային մուտքի բաւավորի վրա:

Քննարկվող արձանագրության բուն բովանդակությունը բացահայտվում է հետաքննարար և տարրերթերցումների առթիվ չի տալիս. նվիրատու հաշենիսենց Գրիգորը իր հալալ արդյունքով միարանել է Առաքելոց վանքին և երկու պատարագժամ ստացել դրա փոխարեն:

Չնայած դրան, որոշ բանասերներ արձանագրությունը շինարարական բնույթի են համարել, հավանարար նկատի ունենալով նրա աչքի ընկնող տեղագրությունը՝ միակ մուտքի ընդարձակ ճակատակալը, որտեղ սովորաբար փորագրվում էին հուշարձանի շինության կամ նորոգման մասին հիշատակությունները: Ոմանք էլ, ճիշտ մեկնաբանելով բնագրի՝ նվիրատվական բնույթը, Առաքելոց հուշարձանախմբի ժամանակագրության համար ելակետ են ընդունել ՈՂԳ (1244 թ.) թվագիրը և ըստ այդմ հանգել այն եզրակացության, թե զիսավոր եկեղեցին, գավթը, պարսպապատերը և մերձակա շինությունները կառուցվել են դրանից մի քանի տասնամյակ առաջ: XII դարի վերջերին կամ XIII դարի սկզբներին¹⁵:

¹⁰ Н. Я. Марр, Фресковое изображение парона Хутлу-буги в Ахпате, ХВ. 1912, т. I, вып. III, էջ 351—352:

¹¹ Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, Ավանի երկրեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 21:

¹² Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Անձ. բառ., Բ, էջ 357—358, Բ ա Ր խ ու դ ա Ր յ ա ն ց, Արցախ, 1895, Բաթու, էջ 378:

¹³ Ա շ. Հ ո Վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. Ա, Երևան, 1957, էջ 255:

¹⁴ Ա լ ի շ ա ն, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 539: Կ. Հ ո Վ ս ե փ յ ա ն, հաղթակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, մասն Բ, էջ 38—39, մասն Գ, էջ 186:

¹⁵ Տե՛ս Գ. Ս ա Ր գ ս յ ա ն, Նշվ. աշխ., էջ 38, Հ. Ծ դ ի ա զ ա Ր յ ա ն, Իջևանի շրջանի պատմական հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1947, էջ 12: Վ. Հ ա Ր ու թ յ ու ն յ ա ն, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 98:

Գավթի արձանագրության թվագրի մեր վերծանությամբ այդպիսի եզրակացությունը դրվում է հիմքից: Առաքելոց վանք-ամրոցի և գյուղաքաղաքի ընդարձակ տերիտորիայում պահպանված մի շարք կանգուն կամ կիսավեր հուշարձանների արձանագրություններից երևում է, որ գրանք ընդունելու կառուցվել են «աստվածասեր աթարեկ» Սազունի տիրապետության ժամանակ և թվագրված են այդ տարիներով. գրանցից են՝ Զույգ եկեղեցիները և մերձակա խաչքարերը՝ ԶԻԳ (1247 թ.), ԶԻԲ (1273 թ.), ԶԺԶ (1267 թ.), պարսպամերձ եկեղեցին՝ ԶԻՆ (1276 թ.), Թեալոր խաչը՝ ԶԼԲ (1283 թ.), Տամարթի գյուղատեղի խաչքարը՝ ԶԻԲ (1273 թ.) և այլն: Առաքելոց վանքի մոտակայքում պահպանված թվագիր ունեցող հնագույն հուշարձանը վերը նշված հրե-ձորուտ հնավայրի «Բեմ» կոչվող գեղաքանդակ խաչքարն է, որի Զ (1251 թ.) թվականի արձանագրության մեջ, ինչպես և պետք էր սպասել, պարուն Սազունը հիշատակվում է առանց «աթարեկ» կամ «ամիրսպասալար» տիտղոսների, սոսկ իբրև «պարուն իշխանաց իշխան»¹⁶:

Ուստի ավելի հավանական է, որ Առաքելոց վանքի հուշարձանախմբի շինվածքները ևս կառուցվել են Մահկանաբերդի Արծրունիների իշխանության ժաղկման ժամանակաշրջանում, աթարեկ ամիրսպասալար Սազուն Բ-ի և նրա որդի Խուլուրուղայի տիրապետության տարիներին, XIII դարի երկրորդ կեսին:

Բ. Թաար անունով կազմող-փանդակող շի եղել

Այս անձնանունը առաջինը բանասիրությանը ներկայացրել է Կ. Ղաֆադարյանը՝ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին 1940 թ. հրապարակած իր շահեկան ուսումնասիրության մեջ: Նկարագրելով Անապատ կամ Նոր Վարագ հուշարձանախմբի Դավթաշեն փոքր տաճարի արևմտյան ճակատի հարդարանքը և մուտքի երկու կողմերին ազդեցված գեղաքանդակ խաչքարերի քանդակազարդերը, հեղինակն իրավամբ այն համոզման է գալիս, որ դրանք միևնույն քանդակագործ-կազմողի ձեռակերտն են, և աշակողմյան խաչքարի ստորին մասում փորագրված արձանագրության վերծանությամբ վերականգնում է քանդակող վարպետի անունը՝ Թաար: «Ինչպես իմանում ենք արձանագրություններից,—գրում է հեղինակը,—այդ խաչքարերը կազմել է Թաար վարպետը, որը մեր երևելի քանդակագործներից մեկն է, առայժմ մեզ հայտնի միայն այս երկու խաչքարով»:

Ինչպես և պետք էր սպասել, Կ. Ղաֆադարյանի հոգևածից նորագյուտ Թաար անձնանունը մուտք է գործում Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանը», ստուգարանվում իբրև Թահար (արար. խոնդ «մաքուր» բառից) անվան հնչյունափոխված տարբերակ (թեև հայերենի համար անսպասելի ձայնավորների՝ հորանջ առաջացնող հանդիպումով) և տեղ գրավում նույն անձնանունների առաջին շարքում՝ որպես XIII դարի վերջին գործած «երևելի վարպետ-քանդակագործի» առաջին հիշատակություն¹⁸: Նույն աղբյուրից առնելով՝ Ս. Բարխուդարյանը Թաարին տեղավորում է միջնադարյան քարգործ-վարպետների համապատասխան շարքում՝ գրեթե անփոփոխ մեջ բերելով՝ Ղաֆադարյանի տեսությունը քանդակագործ-կազմողի ձեռակերտների մասին¹⁹:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ վերոհիշյալ խաչքարերի, ինչպես և Անապատ կամ Նոր Վարագ հուշարձանախմբի ողջ վիմագրության մեջ Թաար անձնանունը չի կարդացվում և այն հավանաբար առաջանում է աշակողմյան խաչքարի ստորին մասում փորագրված արձանագրության ոչ ստույգ վերծանությունից:

Իրականում այդ խաչքարի ստորին մասի հարթ մակերեսին խոշոր, գեղեցիկ տառատեսակ-ներով փորագրված է երկու տող՝

ԽԱՉՍ ԹԱ
Ա Ի Ն. Է

որն, անտարակույս, պետք է վերծանել՝ «Խաչս Թամարին է»: Այսպիսով, բնագրի անձնանունը ոչ թե Թաար է, այլ Թամար:

¹⁶ Խաչարձանի ընդարձակ արձանագրությունը հրատարակված չէ, բերում ենք մեր հավաքածուից:

¹⁷ Կ. Ղաֆադարյան, Պատմա-հնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին, «Տեղեկագիր» ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1940, № 4—5, էջ 169:


¹⁸ Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 261:

¹⁹ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 141:

23 Գ. Ս ա Ր գ ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 28, ալիւ՝ 4. Ղ ա Ֆ ա դ ա Ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 169.

որմի մեջ, մկրտության ավագանի կողքին, շրջված վիճակում ազուցված ձևավոր բեկորի արձանագրությունը, որը ժամանակին Բարխուդարյանցը կարդացել է «Թիւ ՈԱ. Ես Արտաւազ և Սարգիս շինեցաք զեկեղեցիս ձեռամբ Յովհաննեսի»²⁴:

Հետագա ուսումնասիրողները, հիմք ընդունելով խաթարված բնագրի այս վերծանությունը, Սրվելի վանքի զխավոր եկեղեցին համարել են հայկական ճարտարապետության հնագույն և սակավաթիվ աղյուսաշեն հուշարձանը՝ կառուցված Հովհաննես ճարտարապետի ձեռքով, ՈԱ (1152) թվին²⁵:



Իրականում, հուշարձանի, ինչպես և լուսանկարի վրա այդ բեկորի արձանագրությունը փոքր ինչ այլ կերպ է կարդացվում. առաջին տողում, բեկորի ավելի լայն, հարթ մակերեսին, խոշոր գրերով փորագրված է՝ Ս[Բ] ՅՈՎ[ԱՆՆ]ԷՍ, իսկ երկրորդ տողում, բեկորի նեղ, ձևավոր մակերեսին, ավելի մանր գրերով՝ ...ԱՐՏԱԻԱԶ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՇԻՆԵՑԱՔ ԶԵԿ(ԵՂԵՑԻՍ) ԶԵՌԱՄԲ ՅՈՎ-ՀԱՆԻՍ[Ի]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ տարեթիվ չկա և Մ. Բարխուդարյանցի «Թիւ ՈԱ» թվագիրը գալիս է Ս[Բ] ՅՈՎ[ԱՆՆ]ԷՍ անվան սխալ վերծանությունից (ՍԲ գրերը վերծանվել են «Թիւ», իսկ Յ) ՈՎ գրերը դարձել են ՈԱ թվագիրը): Բացի դրանից, բնագրի սկզբում չկա և չէր կարող լինել ԵՍ դերանունը, քանի որ նրա փոխարեն սպասելի էր՝ ՄԵՔ:

Սակայն խնդիրը չի սպառվում միայն այս շինարարական արձանագրության թվագրի շրտկումով. մեր վերծանությունից հետո բաց է մնում ոչ միայն Սրվելի հուշարձանի կառուցման ժամանակը, այլև այն պարագան, թե որ հուշարձանին է պատկանում շրջված վիճակով աղյուսաշեն պատի մեջ ազուցված ձևավոր քարաբեկորը, կամ որն է Հովհաննես ճարտարապետի կառուցած եկեղեցին: Դժվար է ասել, թե աղյուսաշեն հուշարձանի որ մասում է նախապես դրված եղել բարդ մշակում ունեցող այս բեկորը. կասկածից վեր է, որ այն ներկայիս տեղում չի եղել և այստեղ է դրվել հետագա վերանորոգումների ժամանակ: Ամենայն հավանականությամբ այս մշակված քարը եկեղեցու մուտքի շրջանակի մի մասն է եղել, իսկ լրիվ արձանագրությունն էլ փորագրված է եղել սւմրող շրջանակի վրա:

Սակայն ո՞ր հուշարձանի մուտքի շրջանակը, դժվար է ասել: Միայն լրացուցիչ ճարտարապետական քննությամբ կարելի է պարզել, թե որն է այս բեկորի նախնական տեղը, արդյոք ներկայիս հուշարձանին է պատկանում, թե բերված է մի այլ, քարաշեն կառուցվածքից, ինչպես եկեղեցու պատերի մեջ ազուցված մյուս արձանագրված քարե բեկորները:

24 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 340:

25 Տե՛ս Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 41:

Մյուս կողմից, հավանականությունից զուրկ չէ նաև հնագետ Հ. Եղիազարյանի տեսակետն այն մասին, որ «այժմյան հուշարձանի տեղում հնում եղել է մի ուրիշ քարաշեն հուշարձան» և որ ներկայիս աղյուսաշեն եկեղեցին կառուցվել է ավելի ուշ, XIII—XIV դարերում²⁶։

Դ. Ոչ քե ԳՇՈՑ, ՎԵՑԿԻ... այլ ԸՈՑ ՎԵՑԿԻ...

Սանահնի Գրատան հարավային պատի արևմտյան անկյունում, արտաքուստ, փորագրված Կիրակոս առաջնորդի նվիրատվական արձանագրությունը մեզ է հասել անվթար վիճակում, վնասված կամ եղծված տառաձևեր համարյա չկան, ուստի և ընթերցվում է լիակատար հավաստիությամբ։ Չնայած դրան, բնագրի նախորդ հրատարակիչներ Ղրիմեցու և Զալալյանցի արտագրություններում առկա են մի շարք բացթողումներ ու տարբերություններ, որոնք զգալի չափով հեռանում են բնագրից և աղավաղում նրա իմաստը²⁷։

Արձանագրության նորագույն վերծանությունը պատշաճ ընդօրինակությամբ վերջերս հրատարակել է պրոֆ. Կ. Ղաֆադարյանը։

Հեղինակի այս վերծանությունը հիմնականում ճշգրտում է Ղրիմեցու, Զալալյանցի սխալները և ավելի մոտենում բնագրին։

Սակայն այստեղ ևս անորոշ են մնում բնագրի որոշ կետեր, հստակ չի հասկացվում նրա իմաստը, մանավանդ երկրայության առիթ է տալիս 5-րդ և 6-րդ տառաշարքերի ընթերցումը։

Ահա արձանագրության այդ հատվածը ըստ պրոֆ. Ղաֆադարյանի վերծանության.

1. Թւ. ԶԺԳ.

2. Մեծաւ յուսով սրբո

3. Ածածնիս հայրս Կիրա

4. Կոս առաջնորդ սբ ուխ

5. տիս, աշակերտ եղբարցս ետու սբ...[թ]շո

6. ց, վեցկի...»

և թվարկվում են նվիրված առարկաները²⁸։

Այստեղ անհասկանալի է մնում, թե որ բառին է վերաբերում «ետու» ստորոգյալին հաջորդող ՍԲ (սուրբ) որոշիչը, քանի որ նրանից հետո թվարկվող նվերներից ոչ մեկը այդպիսի որոշիչ ունենալ չէր կարող։

Ոչ մի կերպ չի արդարացվում, ուստի և կասկածելի է Ք գրի վերականգնումը և ըստ այդմ «Քշոց» բառի ընթերցումը, քանի որ տեղում այդպիսի տառաձևեր չեն կարդացվում (..շոց), իսկ բառին նախորդող կետերը, որ դրված են բնագրի անվերծանելի տեղերը ցույց տալու նպատակով, ավելորդ են, որովհետև իրականում այդպիսի տեղեր չկան։

Արձանագրության տարբերությունները պարզելու նպատակով մեջ ենք բերում նույն հատվածը մեր ընթերցմամբ.

1. Թւ. ԶԺԳ.

2. Մեծաւ յուսով սրբո

3. Ածածնիս հայրս Կիրա

4. Կոս առաջնորդ սբ ուխ

5. տիս աշակերտ եղբարցս ետու միաբանու[թե]ն, Ը

6. ց վեցկի...» և այլն։

Ինչպես տեսնում ենք, 5-րդ տողում, «ետու» բառից հետո բաց է թողնվել մի ամբողջ բառ՝ «միաբանու[թե]ն» կամ «միաբանու[թի]ն», փոխարենը տեղագրելով ՍԲ հապավումը, որը իրականում գոյություն չունի և անհարիր է տվյալ իրադրությունը։

Այս բառը ժամանակին նկատել է նաև Հովհաննես Ղրիմեցին, սակայն նրա գրքում այն տպագրված է «միաբանիցս» ընթերցմամբ²⁹։


²⁶ Հ. Եղիազարյան, Իջևանի շրջանի պատմական հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1947, էջ 18։

²⁷ Ս. Զալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիս, 1842, էջ 26; Описание монастырей Ахпатского и Сананнского архимандрита Иоанна Крымского, СПб, 1863, էջ 62։

²⁸ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 89, 152—153։

²⁹ Описание..., էջ 62։

Բացի դրանից, նույն տողի վերջում աներկրա կարդացվում է Շ Ո(Ց վեցկի...), մինչդեռ դրա փոխարեն հրատարակված է ...[ք]շոց, վեցկի...:



Այսպիսով, Սանահնի վանքի առաջնորդ Կիրակոսը աշակերտ եղբայրներին, այսինքն վանքի Գրատանը կամ դպրոցին նվիրել է ոչ թե «...[ք]շոց, վեցկի...», այլ ՇՈՑ վեցկի... (ութնոց վեցկի—ութնոց արոր):

Ութնոց վեցկի կապակցության բացատրությունը տալիս է ինքը Կ. Ղաֆաղարյանը նույն Սանահնի վանքի մի այլ արձանագրության մեկնության մեջ, որը և տեղավորում ենք այստեղ. «Ութնոց վեցկին ամենածանր, ութ եղներով զործի զրվող արորն է, որ ամբողջովին փայտից էր շինվում. բացի խոփից, որ երկաթից էր լինում»³⁰:

Ակադ. Բրոսեն Դրիմեցու գրքում զետեղված արձանագրությունների թարգմանության մեջ «աշակերտ եղբարցս» կապակցությունը մեկնել է իբրև послушник братии (վանական եղբայր, մոնթ), այդ հատկանիշը վերագրելով հայր Կիրակոսին, ըստ այդմ էլ բնագրի այդ հատվածը թարգմանվել է «...Я отец Киракос, настоятель св. Обители и послушник братии...»³¹. մինչդեռ ականքն է, որ վանքի առաջնորդ հայր Կիրակոսը չէր կարող լինել «աշակերտ եղբարցս»:

Ե. Վկայված է ոչ քե Տարիել, այլ՝ Տաշրել...

Շոթա Ռուսթավելու վերջերս հրատարակված «Հնձնավոր» պոեմի ծանոթագրություններում Պ. Մուրադյանը հայկական աղբյուրներում Տարիել անձնական նախնադույն հիշատակության առթիվ բացատրում է. «Տարիել—անձնանուն, որ առաջին անգամ վկայված է Մակարավանքի արձանագրության մեջ. «...Ծս՝ Դաւիթ, որդի Տարիէլի և Լիտան մեծ եւ հզար իշխանին արարէկ Սաղունին...»³²:

Ամբողջ 7 տողանի արձանագրությունը փորագրված է Մակարավանքի զլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին, մի մեծ սրբատաշ քարի վրա և, չնայած հիանալի պահպանությանը, առաջին հրատարակիչ Ս. Զալալյանցի կողմից արտագրվել և հրատարակվել է էական աղավաղումներով, մանավանդ անձնանունների անհիմն տարբերություններով³³: Հենց մեջ բերած հատվա-

³⁰ Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 118:

³¹ Описание..., էջ 62:

³² Շոթա Ռուսթավելի, Հնձնավոր, Երևան, 1966, էջ 312:

³³ Ս. Զալալյանց, Ժանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփլիս, 1842, էջ 152:

ծում բնավ չի հասկացվում, թե ով է լիտա(ն) անվանվածը և ինչ հարաբերություն ունի Դավթի, Տարիելի կամ Ուղուհի հետ:

Միայն այս պարագան բավական էր անվստահություն ներշնչելու բնագրի այդպիսի ընթերցման նկատմամբ և հեղինակին ստիպելու զդուլությամբ վարվել վկայության հետ կամ դիմել ավելի հավաստի վերծանությունների, որպիսին են, օրինակ, Մակարավանքի բոլոր արձանագրությունների նորագույն վերծանությունները, որ բարեխղճորեն կատարել է բանասեր Դ. Սարգսյանը³⁴:


Սակայն Պ. Մուրադյանը Տարիել անձնանվան վկայությունը քաղելով Ն. Մառի՝ 1964 թ. հրատարակված արխիվային նյութերից, վստահել է դրանց և, բնականաբար, չի հոգացել այդ իրողության հավաստիության մասին:

Ն. Մառը «Ռուսթավելու աշխարհայացքը ըստ աֆորիզմների» ուսումնասիրության սեպագրություններում, իրոք, Տարիել անվան դիմաց հարևանցի նշել է. «Հանդիպում է 1225 թվականի հայկական արձանագրության մեջ. «Ես Դավթ, որդի Տարիելի և այլն»³⁵:

Մառը արձանագրության այս հատվածը մեջ է բերում ոչ թե սկզբնաղբյուրից՝ առաջին հրատարակիչ Ջալալյանցի գրքից, ս.յլ Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգրից»³⁶, ուր այս անթվակիր արձանագրությունը տեղավորված է 1225 թ. տակ, որը և նյութ է տվել Տարիել անձնանվան մասին ժամանակագրական թյուր հաստոյությունների:

Նշված տարբերությունները պարզելու նպատակով մեջ ենք բերում Մակարավանքի սույն արձանագրության մեղ հետաքրքրող հատվածը սեփական վերծանությամբ, որի հարադատությունը իրականի հետ հեշտությամբ կարելի է ստուգել տեղադրվող լուսանկարով, ինչպես և Դ. Սարգսյանի ընդօրինակությամբ.

1. [Յ]ՈՒՍՈՎ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ, ԵՍ՝ ԴԱԻԻԹ, ՈՐԴԻ ՏԱՇՐԵԼԻ
2. [Ս]ՆԵ[Ա]Լ Ի ՏԱՆ ՄԵԾ ԵՒ ՀԶԱԻՐ ԻՇԽԱՆԻՆ՝ ԱԹԱԲԱԿ ՍԱԴՈՒՆԻՆ Ե
3. [Տ]ՈՒ ԸՆԾԱ ՅԵԿԵՂԵՅԻՍ Վ[Ա]Մ[Ն] Ն[Ն]ՋԵՅԵԼՈՅ ՄԵՐ, ՊՐ ԸՆԴ ՀՈՎ
4. [Ա]ՆԵ[Ա]Ի ՍՈՐԱ...



ապա շարադրվում են հատուցման և անեծքի ձևակերպումները:

34 Գ. Սարգսյան, Մակարավանք, «էջմիածին», 1954, № 4, էջ 30—36, № 5, էջ 46—53.

35 Н. Я. Марр, Об истоках творчества Руставели и его поэме, Тбилиси, 1964, էջ 181.

36 Տե՛ս Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, ս. Պետերբուրգ, 1913, էջ 69:

Այսպիսով, բնագրում վկայված է ոչ թե «Դաւիթ որդի Տարիէլի», այլ՝ ԴԱՒԻԹ ՈՐԴԻ ՏԱՇՐԵԼԻ (նորագյուա անձնանուն, որ հավանաբար ծագում է Տաշիր, Տաշիրք տեղանունից), ոչ թե՝ «...եւ չիտան մեծ եւ հզար իշխանին...», այլ՝ ...[Մ]նծ[Ա]՛ Ի ՏԱՆ ՄԵՍ ԵՒ ՀԶԱԻՐ ԻՇԽԱՆԻՆ... (ըստ Գ. Սարգսյանի ընթերցման՝ ...[Մ]նծ[Ա]՛ Ի ՏԱՆ...)՝³⁷,

Դառնանք արձանագրության ժամանակին. ասացինք, որ տեղում և Ջալալյանցի ընթերցման մեջ թվագիր չկա։ Արձանագրության վերջում, նույն քարի վրա, ԱԻՐՀՆԻՆ բառի տակ ավելի պակաս խորությամբ փորագրված է Չ գիրը, որը չի նկատվել նախորդ հրատարակչների կողմից և կարող է լինել այս կամ մի ուրիշ արձանագրության անավարտ թվագիրը, ինչ-ինչ պատճառներով կիսատ մնացած, սակայն դժվար է այդ միայնակ Չ գիրը հավաստի կերպով Դավթի արձանագրության թվագիրը համարել, քանի որ նախ՝ այդ գիրը ոչ մի չափով նման չէ բնագրի տառատեսակներին և ապա՝ նրանից առաջ կամ հետո չեն փորագրված «Թ», «թուին», «ի թուին» բառերը, որ սպասելի էր նման դեպքերում։

Սակայն արձանագրության ժամանակը մի քանի տարվա ճշտությամբ որոշվում է նրանում հիշված պատմական անձերի՝ աթաբեկ Սադունի և Մակարավանքի առաջնորդ Հովհաննես Բ-ի ժամանակագրությամբ, էական հանդամանք, որ անտեսվել է բնագիրը ուսումնասիրողների կողմից։

Մահկանաբերդի իշխան աթաբեկ Սադուն Բ-ն հիշատակվում է Հաղբատավանքի և այս գավառի այլ հուշարձանների բազմաթիվ վիմական արձանագրություններում՝ սկսած 1250-ական թթ. մինչև 80-ական թթ.³⁸, նա աթաբեկության է հասել 1270 թ.³⁹,

Այս նույն ժամանակներում էր գործում նաև Մակարավանքի մեզ հայտնի երրորդ առաջնորդ Հովհաննես Բ-ն, որը վանքի վիմագրության մեջ առաջին անգամ իրրե վանահայր հիշատակվում է 1253 թ., իսկ վերջին անգամ՝ 1278 թ.⁴⁰,

Այստեղից միանգամայն ակնհեր է, որ Տաշրելի որդի Դավթի արձանագրությունը չէր կարող փորագրված լինել 1225 թ., ինչպես, հետևելով Կ. Կոստանյանցին, գտնում են Ն. Մառն ու Պ. Մուրադյանը։ Աթաբեկ Սադունի և վանահայր Հովհաննես Բ-ի հիշատակությունն ապացույց է, որ բնագիրը քանդակվել է դրանից մոտ կես դար անց, 1270-ական թթ., ուստի ժամանակագրական առումով ևս քննարկվող արձանագրությունը որևէ հիմք չի տալիս այնտեղ Տարիել անձնանվան ավելի հնագույն, քան Ռուսթավելու պոեմում է, վկայությունները որոնելու։

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ մեր կարծիքով Տարիել անձնանվան հնչյունափոխված տարբերակը՝ ԹԱՐԵԼ (ըստ Ջալալյանցի՝ ՏԱՐԵԼ) հանգիպում է նույն Մակարավանքի գավթի երկու նվիրատվական արձանագրություններում, որոնցից առաջինը փորագրված է գավթի հարավային դռան ճակատակալ քարի վրա, դրանդի կամարի տակ և թվագրված է ՁՂ Թ[Վ]ԻՍ (1241), իսկ մյուսը՝ նույն մուտքից փոքր ինչ վերև, զույգ խաչերի կողքին և ունի ՈՂԳ (1244) թվագիրը⁴¹։

37 Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 4, էջ 32։

38 Տե՛ս Գ. Հովսեփյան, Ձագավանից ժողովը, «Շողակաթ. հայագիտական ժողովածու», Վաղարշապատ, 1913, էջ 26—27։ Հավուց Թառի Ամենափրկիչը... Երուսաղեմ, 1937, էջ 62։ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 171, 193, 197, 213։

39 Տե՛ս Н. А. Бердзенишвили и другие, История Грузии, Тбилиси, 1962, էջ 245։

40 Տե՛ս Գ. Սարգսյան, Մակարավանք, «Էջմիածին», 1954, № 5, էջ 47—51։ Ս. Ջալալյանց, նույն տեղում, էջ 151։

41 Տե՛ս Գ. Սարգսյան, նույն տեղում, էջ 46—47։